Երկրորդ ընթերցում
Նախագիծ

ԽՍ-858-05.02.2021,15.03.2021-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 5-ի ՀՕ-195-Ն օրենքի 22-րդ հոդվածում՝

1) լրացնել նոր 5.1-ին մաս՝

«5.1. Սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն տրված տարկետման ժամկետի ավարտի օրվա դրությամբ միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսումնառությունը չավարտած, ավարտական կուրսում սովորող և պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ մեկ անգամ տրվում է տարկետում՝ մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 20 տարին լրանալու օրը:».

2) 6-րդ մասում «3-րդ և 5-րդ» բառերը և թվերը փոխարինել «3-րդ, 5-րդ և 5.1-ին» բառերով և թվերով:

Հոդված 2.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում
ԽՍ-858

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 5-ի ՀՕ-195-Ն օրենքի 22-րդ ~~հոդվածը~~ հոդվածում՝

1) լրացնել նոր 5.1-ին մաս~~ով~~՝

«5.1. Սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն տրված տարկետման ժամկետի ավարտի օրվա դրությամբ միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսումնառությունը չավարտած, ավարտական կուրսում սովորող և պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ մեկ անգամ տրվում է տարկետում՝ մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 20 տարին լրանալու օրը~~:»:~~:».

2) 6-րդ մասում «3-րդ և 5-րդ» բառերը և թվերը փոխարինել «3-րդ, 5-րդ և 5.1-ին» բառերով և թվերով:

Հոդված 2.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-858) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

No.	*Առաջարկի հեղինակը*	*Նախագծի հոդվածը, մասը, կետը, որին վերաբերում է առաջարկը*	*Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)*	*Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը*	*Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը*
1.	Կառավարություն	1-ին հոդված	(…) առաջարկում ենք օրենքի նախագծում ներառել ևս մեկ լրացում՝ 22-րդ հոդվածի 6-րդ մասում «5-րդ» բառից հետո լրացնել «, 5.1-ին» բառը: Այդ առումով 1-ին հոդվածը լրացնել նոր կարգավորիչ կետով:	Ընդունվել է	Ընդունվել է